ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N ՄՊ/67-2019

„19„ 04 2019թ.

ք.Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ/ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի ԹԻՎ 13 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման>> կարգի 50-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել Արարատի ներմարզային՝ <<Վեդի-Գոռավան-Արարատ>> թիվ 02-017 ավտոբուսային երթուղու սպասարկման համար համալրման կարգով ավտոբուս ներգրավելու մասին Հայաստանի Հանրապետության Արարատի ներմարզային ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիները ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին հատկացնելու մրցութային հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ 13 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

Восстановимая подпись

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN GARIK 2811870695 Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզպետի
2019թ. ապրիլի 19-ի
թիվ 117/67 որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

2019թ. ապրիլի 11-ին կայացած մրցութային հանձնաժողովի նիստի

Նիստի նախագահ Գ. Մուրադյան

Նիստի քարտուղար Կ. Ստեփանյան

Նիստին մասնակցում էին մրցութային հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Հակոբյանը, անդամներ Մ. Թադևոսյանը, Մ. Մանուկյանը

Օրակարգ

<<Վեդի-Գոռավան-Արարատ>> թիվ 02-017 միկրոավտոբուսային երթուղու սպասարկման համար համալրման կարգով միկրոավտոբուս ներգրավելու մասին:

Զեկուցող- հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մուրադյան

Արտահայտվեցին- Ա. Հակոբյանը, Մ. Մանուկյանը և Մ. Թադևոսյանը:

Հիմք ընդունելով <<Վեդու ԲՈՒԱՏ>> ՍՊԸ-ի 2019թ. ապրիլի 3-ի N6 գրությունը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված կարգի 69-րդ կետի 1-ին ենթակետով, 70 և 73-րդ կետերով, հիմք տրանսպորտային միջոցի գնահատման ամփոփ թերթիկ՝

Որոշեցին

<<Վեդի-Գոռավան-Արարատ>> թիվ 02-017 միկրոավտոբուսային երթուղու սպասարկման համար համալրման կարգով ներգրավել Գազ 32213 մակնիշի 472AR61 պետհամարանիշի միկրոավտոբուսը:

Նախագահ	Գ. Մուրադյան /ստորագրություն/
Տեղակալ	Ա. Հակոբյան /ստորագրություն/
Քարտուղար	Կ. Ստեփանյան /ստորագրություն/
Անդամներ	Մ. Թադևոսյան /ստորագրություն/
	Մ. Մանուկյան /ստորագրություն/

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Восстановимая подпись

X

ԱՐՄԱՆ ԴԵՐՄՈՅԱՆ

Подписано: DERMOYAN ARMAN 2403730106

Ա. ԴԵՐՄՈՅԱՆ